ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2011 թվականի թիվ 42/1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ կետով.

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքում ավագանու հերթական ընտրությունը նշանակել 2011թ. հուլիսի 24-ին:

2. Առաջարկել վերը նշված համայնքի ղեկավարին.

Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:

3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին.

Ընտրության նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 40 ընտրատարածքային ընտրական, ինչպես նաև համայնքի տեղամասային ընտրական հանձնաժողովի հետ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. ապրիլի 22
ք. Իջևան